

ՊՍԵՊԱՍԾԾՍՍ ԱՅԾԾԶԻ ՔԻ ԾԶԵԻ ԶՂՈՂՈՒԹՅԱՆ ԾԶԾՍԻ ԶԾՊԵ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԾԾՈՒԹՅԱՆ ՕՐ  
ՁԵՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԶԾՍԻ ԾԶԵԻ ԶԻ ԾԶՍ

16.03.09 կող 117-09119

Հավելված  
Հաստատված է  
ՀՀ քաղաքաշինության նախարարի  
2009թ. փետրվարի 19-ի N- 13- Ն հրամանով

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգը /մեթոդական ցուցումները/ մշակվել է «ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 24.07.08 թվականի N 870-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների ծրագրի շրջանակներում՝ շինարարական, մոնտաժային, հատուկ շինարարական աշխատանքների /այդ թվում թողարկման-կարգաբերման/ նախահաշվային տարրային նորմերի մշակումը մասնագիտացված կազմակերպությունների կողմից միասնական կարգով /մեթոդով/ իրականացնելու և համակարգչային համապատասխան ծրագրերում ներառելու համար:

Նախահաշվային տարրային նորմերը /ՆՏՆ/ հանդիսանում են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թվականի փետրվարի 15-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Գնագոյացման նորմատիվ փաստաթղթերի համակարգ շինարարությունում» 2008թ. շինարարական նորմերի /ՀՀԸՆ IV-16.01.01-2008/ քաղաղրիչ մասը: Նախահաշվային տարրային նորմերի մշակման սույն կարգը կամ մեթոդական ցուցումները պարտադիր են ՀՀ պետական բյուջեի հաշվին ՀՀ տարածքում քաղաքաշինական մասնագիտացված գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտների համար և կրում են խորհրդատվական /կողմնորոշիչ/ բնույթ ոչ պետական բյուջեի միջոցների , այդ թվում՝ համայնքային բյուջեների հաշվին իրականացվող քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքների և շինարարության նախահաշվային արժեքների որոշման /հաշվարկման/ համար :

2. Նոր ՆՏՆ-ի մշակումը կատարվում է նախկինում գործող ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանով հաստատված ՆՏՆ-84 /ՄՆԻՊ IV- 2- 84 «Շինարարական կոնստրուկցիաների և աշխատանքների տարրային նախահաշվային նորմերի ժողովածուներ»/ ժողովածուների փոխարեն՝ հավելված 1-ի /անվանացանկի/ համաձայն:

3. Նշված աշխատանքների համակարգումն ու համաձայնեցումը իրականացվում է լիազոր մարմնի կողմից:

4. Մասնագիտացված կազմակերպությունները /կամ մասնագիտական աշխատանքային խմբում ընդգրկված նախագծողները/ նախապատրաստական փուլում կատարում են հետևյալ միջոցառումները.

- 1) կազմում են տեխնիկական առաջադրանք և աշխատանքային ծրագիր, որոնք համաձայնեցվում են լիազոր մարմնի հետ,
- 2) նախագծային փաստաթղթերից առանձնացվում են տեխնիկական պայմաններն ու աշխատանքների կազմակերպման նախագծերը,
- 3) որոշվում են ելակետային տվյալները և համաձայնեցվում լիազոր մարմնի հետ,
- 4) առանձին աշխատանքների կատարման և աշխատանքային գծագրերի մշակման համար ընտրվում են տեխնոլոգիական քարտեր,
- 5) կազմվում են ՆՏՆ-ի ամփոփագրեր՝ աշխատատարության /մարդ/ ժամ/, շինարարական մեքենաների շահագործման /մեք/ ժամ/, նյութաձախսի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների օգտագործման տարրային նորմերի չափորոշիչներ,

5. ՆՏՆ-ի մշակումն իրականացվում է սույն մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան՝ ըստ 2-10 բաժինների :

6. ՆՏՆ-ի ժողովածուների նախագծերը համաձայնեցման ու փորձաքննության են ներկայացվում լիազոր մարմնին՝ սահմանված կարգով վերջիններիս հաստատումն ապահովելու համար:

**2. ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՏԱՐՐԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ**

7. ՆՏՆ-ի յուրաքանչյուր ժողովածուն բաղկացած է .

1) տեխնիկական մասից  
2) նախահաշվային տարրային նորմերի ՆՏՆ չափորոշիչների աղյուսակներից՝ ըստ հավելված 2-ում նշված թ.1 օրինակելի ձևի:

8. Ժողովածուի տեխնիկական մասը կազմված է՝

1) «Ընդհանուր ցուցումներ»,

2) «Աշխատանքների ծավալի հաշվարկման կանոններ»,

3) «Նախահաշվային նորմերի նկատմամբ կիրառվող գործակիցներ» բաժիններից:

9. «Ընդհանուր ցուցումներ» բաժինը ներառում է ընդհանուր դրույթներ և պահանջներ տարրային նորմերի կիրառման կարգի վերաբերյալ:

10. «Աշխատանքների ծավալի հաշվարկման կանոններ» բաժինը ներառում է հաշվարկման օրինակելի ձևեր, կանոններ և բանաձևեր :

11. «Նախահաշվային նորմերի նկատմամբ կիրառվող գործակիցներ» բաժինը ներառում է կոնստրուկտիվ տարրերի և աշխատանքների առանձնահատկությունները կամ հատուկ պայմանները հաշվի առնող գործակիցներ:

12. ՆՏՆ-ի տվյալները ամփոփվում են աղյուսակներում՝ կից պարզաբանումներով: Պարզաբանումներում ներկայացվում է աշխատանքների կազմը՝ հիմնական և օժանդակ միջոցառումների ամբողջական ցանկով:

13. Յուրաքանչյուր տեսակի ծախսերի տարրին տրվում է ծածկագիր : ՆՏՆ-ի աղյուսակներին ևս տրվում են ծածկագրեր, որոնք էլ ընդգրկում են աղյուսակի և ժողովածուի համարները /համարակալումները/: Կարող են նախատեսվել լրացուցիչ համարակալման վանդակներ այլ աղյուսակների համար: Փորձաքննությունից հետո աղյուսակներին, տարրային նախահաշվային նորմերի դրույթներին, ծախսերի տարրերին տրվում են ծածկագրեր: Ծածկագրերը տեղադրվում են ՆՏՆ ժողովածուում մինչև հաստատումը:

14. Բանվորների անվանացանկն ընդունվում է ըստ մասնագիտությունների՝ որակավորման դասակարգման համար անհրաժեշտ չափորոշիչների /տարիֆի/ համաձայն:

**3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

15. Տեխնիկական առաջադրանքն ընդգրկում է ՆՏՆ-ի մշակման կամ լրամշակման հիմնավորումները, աշխատանքների կատարման ժամկետները, հիմնական նպատակներն ու խնդիրները, նորմատիվային սկզբնաղբյուրները, աշխատանքների ընդհանուր արժեքը և աշխատանքների կատարման փուլերը:

16. Աշխատանքային ծրագիրը ընդգրկում է՝ ՆՏՆ-ը աշխատանքների տեսակների ցանկով:

**4. ՆՏՆ ՄՇԱԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԲԱՋԱ**

17. Նախապատրաստական փուլում.

1) հստակեցվում են կոնստրուկցիաներին, շինություններին և աշխատանքների տեսակներին բնորոշ առանձնահատկությունները՝ ելնելով տարածքային, բնակլիմայական և այլ պայմաններից,

2) ընտրվում են տիպային և կրկնակի օգտագործվող /տնտեսապես շահավետ/ նախագծերը, որոնք կարող են ծառայել՝ որպես նմուշ-տարբերակներ,

3) ստուգվում է նոր նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների հավաստագրերի համապատասխանությունը /առկայությունը/,

4) ընտրվում են կառուցվող օբյեկտների կամ առանձին տեսակի աշխատանքների կազմակերպման նախագծեր, որոնք կարող են համարվել նմուշ-տարբերակ կամ ելակետային պայման,

5) ուսումնասիրվում , վերլուծության, ինչպես նաև տեղայնացման են ենթարկվում ՀՀ տարածքում /այդ թվում արտերկրներում/ գործող տարրային նորմերը /այդ թվում՝ ռեսուրսային/ չգործածվող /ոչ արդիական/ նորմերի կիրառումը բացառելու նպատակով:

18 . Գործող նորմերը վերանայվում են և նորերը մշակվում են նախագծման նորմատիվ փաստաթղթերի համաձայն:

## 5. ՆՏՆ-ԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ

19. ՆՏՆ-երով սահմանվող աշխատանքների չափման միավորները նախատեսվում են գործող նորմատիվ փաստաթղթերի համաձայն: ՆՏՆ-երի մշակման ընթացքում կիրառվող չափման միավորների ցանկը ներկայացվում է ըստ Հավելված 2 -ի:

20. Յուրաքանչյուր նախահաշվային նորմի /չափորոշիչ/ համար մշակվում է տեխնոլոգիական քարտ՝ աշխատանքների և գործողությունների, շինմեքենաների և մեխանիզմների բնութագրերի ցանկով: Աշխատանքների ծավալների հաշվարկը կատարվում է համաձայն հավելված 4-ի թիվ 1 օրինակելի ձևի:

21. ՆՏՆ-երը մշակվում են ծախսերի գնահաշվարկի սկզբունքով՝ ըստ հավելված 4-ի թիվ 2 օրինակելի ձևի:

Այն ներառում է

1) շինհրապարակի սահմաններում հիմնական արտադրությունում զբաղված բանվորների աշխատանքի աշխատատարության՝ բեռնման /բարձման/ և բեռնաթափման աշխատանքների ծախսերը /մարդ/ժամ/՝ ըստ հավելված 3-ի թիվ 1 օրինակելի ձևի (առանձին դեպքերում կարող են հաշվառվել նաև ներտարածքային տրանսպորտի շահագործման ծախսերը, լիազոր մարմնի հետ համաձայնեցնելով),

2) մեխանիզատորների աշխատատարության, շինմեքենաների և մեխանիզմների պահանջարկի ծախսերը /մեքենա/ժամ/՝ ըստ հավելված 4 –ի , թիվ 3 օրինակելի ձևի :

3) շինարարական կոնստրուկցիաների, պատրաստվածքների ծախսերը և նյութածախսը՝ ըստ հավելված 4-ի թիվ 4 օրինակելի ձևի :

22. Տարրային նորմերի գնահաշվարկում չեն հաշվառվում արտադրական հարմարանքների և սարքավորումների ծախսերը, որոնք թվարկված են հավելված 5-ում և միաժամանակ հաշվառվում են.

1) վերադիր ծախսերում, որպես սպասարկման ծախսեր

2) ժամանակավոր շենքեր և շինությունների կազմում հաշվառվող շինմեքենաների և մեխանիզմների շահագործման և պահպանման ծախսեր:

23. Գործող արտադրությունների տեխնիկական վերազինման և վերակառուցման, ինչպես նաև շենքերի և շինությունների հիմնանորոգման աշխատանքների ծախսերը հաշվի առնող հատուկ նորմեր են մշակվում այն դեպքում, երբ աշխատանքների կատարման տեխնոլոգիան և ռեսուրսների պահանջարկը էապես տարբերվում է գործող ՆՏՆ-ով սահմանվող նորմերից:

24. Հատուկ ՆՏՆ-երի մշակման համար հիմք են հանդիսանում կապալառուի, Պատվիրատուի և Նախագծողի կողմից համատեղ կազմված՝ նմանատիպ աշխատանքների անհրաժեշտությունը հաստատող ակտի առկայությունը:

25. Հատուկ նախահաշվային նորմերը մշակվում են սույն կարգի համաձայն՝ արտադրությունում կիրառվող հին տեխնոլոգիաների և շինարարական հին մեքենաների օգտագործման և շահագործման դեպքում , որոնց համար հիմք են հանդիսանում .

1) ՆՏՆ-երի գործող ժողովածուները,

2) նոր նորմերը՝ տեխնիկական նորմավորման մեթոդով /ժամանակաչափումով (լրոնումնորաժի) ստացված տվյալների կամ տեխնոլոգիական քարտերի /հաշվարկների / հիման վրա մշակված:

## 6. ՆՏՆ-Ի ԿԱԶՄՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԻ ՈՐՈՇՈՒՄ

26. Աշխատատարության նորմի որոշումն իրականացվում է գործող նորմատիվ բազայի հիման վրա :

Աշխատատարության նորմը համապատասխանեցվում է աշխատանքների կազմակերպման ժամանակավոր տեխնոլոգիաներին:

27. Աշխատատարությունը որոշվում է.

1) տիպային տեխնոլոգիական քարտերի համաձայն՝ ըստ աշխատանքների տեսակի կամ աշխատանքների կազմակերպման նախագծի,

2) աշխատանքի գործող նորմատիվ բազայի համաձայն:

28. Բանվորների աշխատատարության կամ աշխատանքի ծախսերի ամփոփագիրը կազմվում է՝ ըստ հավելված 3-ի թիվ 1 օրինակելի ձևի: Աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ փոքրածավալ գործառնությունը ծախսերում պարտադիր հաշվառելու նպատակով ամփոփ ծախսերի նկատմամբ կարող է կիրառվել շտկող գործակից:

29. Շինարարական մեքենաներն ու մեխանիզմները շահագործող բանվորների

աշխատատարությունը որոշվում է մեքենա/ժամ ծախսերի գնահաշվարկից համապատասխան ծախսերի ընտրությամբ և ընդգրկվում մեքենաների և մեխանիզմների պահանջարկի և մեխանիզատորների աշխատանքների ծախսերի ամփոփագրերում՝ ըստ հավելված 3-ի թիվ 1 օրինակելի ձևի:

**7. ՆՏՆ-Ի ԿԱԶՄՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԵՄԱՆԻԶՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՈՐՈՇՈՒՄ**

30. Ծինմեքենաների և մեխանիզմների պահանջարկի որոշումը կատարվում է ըստ աշխատանքների կազմակերպման նախագծի կամ տիպային տեխնոլոգիական քարտերի համաձայն: Այդ գործընթացն ապահովելու համար կարող են օգտագործվել Ծինարարական նորմերի համապատասխան ժողովածուներ:

31. Մեքենա/ժամ նորմերն ընդունվում են շահագործման պահանջարկի համաձայն .

1) հիմնական մեքենաների, որոնց արտադրողականությունը որոշում է /հողային, ճանապարհային, խողովակաշարերի մաքրման և հիդրոմեկուսացման և այլն/ աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը /տեմպը/:

2) մեքենաների, որոնց շահագործումն անմիջականորեն կապված է *տանող /âäöùâé/#* մեքենայի հետ:

3) մեքենաների, որոնք սպասարկում են միաժամանակ մեկ կամ մի քանի տեխնոլոգիական պրոցեսներ:

32. Այլ շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվում է տոկոսային հարաբերությամբ՝ հիմնական մեքենաների շահագործման ծախսերի արժեքից:

33. Ծինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկի ամփոփագիրը կազմվում է՝ ըստ հավելված 4 –ի թիվ 3 օրինակելի ձևի:

**8. ՆՏՆ-Ի ԿԱԶՄՈՒՄ ԾԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ, ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՈՐՈՇՈՒՄ**

34. Ծինանյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների պահանջարկը որոշվում է նյութածախսի նորմատիվ ցուցանիշների /ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանով հաստատված ՄՆԻՊ 5.01.18-86 «Դրույթ շինարարությունում նյութերի ծախսերի արտադրական նորմավորման»/ ժողովածուի հիման վրա՝ ըստ շինարարական, մոնտաժային և հատուկ աշխատանքների հիմնական տեսակների:

Առանձին տեսակի շինանյութերի և այլ նյութական ռեսուրսների ծախսի նորմերի բազակայության դեպքում դրանց պահանջարկը որոշվում է աշխատանքային նախագծերով :

Տեղական և արտասահմանյան արտադրության նոր նյութերի պահանջարկն որոշվում է ըստ աշխատանքների կազմակերպման տեխնոլոգիական քարտերի:

35. Նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների բնութագրերը տրվում են նախագծին համապատասխան և կից ներկայացվում գնահաշվարկներում և ծախսերի ամփոփագրում:

36. Անխուսափելի և դժվար վերացվող կորուստներն ու թափոնները, որոնք առաջանում են շինհրապարակի սահմաններում տեխնոլոգիական պրոցեսով նախատեսված աշխատանքների կազմակերպման և կատարման արդյունքում, հաշվի են առնվում շինանյութերի պահանջարկի որոշման ժամանակ:

Առանձին տեսակի նյութական ռեսուրսների կորուստների և թափոնների կառավարումը իրականացվում է ՀՀ կառավարության «ՀՀ շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողության ազգային ծրագրի մասին» 2001 թվականի օգոստոսի 1-ի N 1204-Ն որոշմամբ նախատեսված իրավական ակտերի /նորմերի/ համաձայն:

37. Մոնոլիտ բետոնից և երկաթբետոնից կոնստրուկցիաների, ինչպես նաև ամրակապման միջոցով հողային աշխատանքների իրականացման ընթացքում ըստ անհրաժեշտության օգտագործվող անտառանյութի և այլ շրջանառու /բազմակի օգտագործվող/ նյութերի պահանջարկը որոշվում է պատրաստի կառուցվածքների ապամոնտաժումից ստացված մնացորդի և լրացուցիչ նյութածախսի հաշվառումով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանով հաստատված ՄՆԻՊ 5.01.18-86 «Դրույթ շինարարությունում նյութերի ծախսերի արտադրական նորմավորման» և ՄՆԻՊ 5.01.01-82 «Ծախսերի նորմեր նյութերի, շինվածքների և խողովակների 1 մլն.ռուբ նախահաշվային արժեքով շինմոնտաժային աշխատանքների. կոմունալ տնտեսություն. Բնակչության կենցաղային սպասարկում» և այլ իրավական ակտերի համաձայն:

38. Այլ նյութերի պահանջարկը որոշվում է ըստ աշխատանքների տնտեսական խմբավորման՝ հիմնական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արժեքի 5%-ի չափով:

### 9. ՇԻՆՏՐԱՊԱՐԱԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ՏԵՂԱԹՈՒՄԱՆ ԾԱՆՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

39. ՆՏՆ-ի կազմում չեն հաշվառվում անմիջապես արտադրությունից կամ ձեռք բերման այլ վայրից մինչև կառուցվող օբյեկտին կից պահեստը նյութական ռեսուրսների տեղափոխման /բացառությամբ բնոնման կամ պահեստավորման/ ծախսերը:  
Նշված ծախսերը ամբողջությամբ հաշվառվում են նյութերի արժեքում:
40. ՆՏՆ-ի կազմում հաշվի են առնվում բոլոր այն ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են շինհրապարակի սահմաններում նյութական ռեսուրսների տեղափոխման հետ /այդ թվում կոնկրետ մոնտաժվող հատվածին շինանյութերի մատակարարման կամ մոտեցման ծախսերը/ :  
Կարող են հաշվառվել նաև մինչև 1 կմ տարածության վրա առանձին տնտեսական նյութական ռեսուրսների տեղափոխման մինչև 20% ծախսերը, որոնք կատարվում են շինհրապարակում վերամբարձ մեխանիզմի աշխատանքի սահմանագծում: Նոր նորմերի մշակման ընթացքում կարող են նախատեսվել նաև ներտարածքային տրանսպորտային ծախսեր:
41. Ծինարարական հրապարակում շինանյութերի բնոնաթափման ծախսերի պահանջարկը ընդգրկվում է բանվորների աշխատատարության ծախսերի ամփոփագրում՝ ըստ հավելված 3-ի թ.1 օրինակելի ձևի:
42. Ներտարածքային տրանսպորտի մեքենա/ժամ ծախսերը ներառվում են մեխանիզատորների աշխատատարության , շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկի ամփոփագրում՝ ըստ հավելված 4-ի թ 3 օրինակելի ձևի:

### 10. ՆՏՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

43. ՆՏՆ մշակող կազմակերպությունները ներկայացնում են հաստատման ժողովածուների նախագծերը և դրանք հիմնավորող փաստաթղթերը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թվականի փետրվարի 15-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Գնագոյացման նորմատիվ փաստաթղթերի համակարգ շինարարությունում» ՀՀՇՆ IV-16.01.01-2008 -ի համաձայն
- 1) փաստաթղթային տարբերակ՝ 3 օրինակից
  - 2) էլեկտրոնային տարբերակ՝ 1 կրիչ.ՆՏՆ աղյուսակի կառուցվածքն ու ձևաչափը :
44. ՆՏՆ ժողովածուները կազմվում են և համարակալվում՝ ըստ աշխատանքների տնտեսական խմբավորման 1-ի համաձայն: Ժողովածուի բոլոր բաժիններն ու աղյուսակները համարակալվում են:
45. ՆՏՆ յուրաքանչյուր աղյուսակի համար կազմվում են հետևյալ հիմնավորող փաստաթղթերը.
- 1) բացատրագիր, որտեղ հղումներ են կատարվում նախագծերին, տիպային կոնստրուկցիաներին, աշխատանքային գծագրերին, որոնց հիման վրա մշակվել են տարրային նախահաշվային նորմերը, աշխատանքների կատարման պայմաններն ու մեթոդները, մեքենաների և մեխանիզմների ընտրության սկզբունքները, տվյալների խոշորացման կամ միջինացման հիմնավորումները, ինչպես նաև այլ տեղեկատվություն ելակետային տվյալների մասին,
  - 2) աշխատանքային պրոցեսների տեխնոլոգիական քարտերը՝ տեխնոլոգիական գործընթացի մանրամասն թվարկումով՝ ըստ աշխատանքների տնտեսակի,
  - 3) գնահատականներ՝ ծախսերի մանրամասնումով,
  - 4) բանվորների աշխատանքների ծախսերի /աշխատատարության/ ամփոփագրեր,
  - 5) շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկի, ինչպես նաև մեխանիզատորների աշխատանքի ծախսերի ամփոփագրեր,
  - 6) շինանյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների ծախսերի ամփոփագրեր,
  - 7) ՆՏՆ մշակման ընթացքում օգտագործվող աշխատանքների կազմակերպման նախագիծ, գծագրեր և այլ փաստաթղթեր:

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Վ Ա Յ Ի Ն      Տ Ա Ր Ր Ե Ր Ի  
 Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր Ի      Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

N ժողով.	Ժողովածուի անվանումը	Ժողովածուի ծածկագիրը* ՀՀՇՆ	Մշակող կազմակեր. անվանումը
1	2	3	4
<b>1. Շինարարական և հատուկ շինարարական աշխատանքներ (ծածկագիր 02)</b>			
1	Հողային աշխատանքներ	ՆՏՆ ...-02-01- **	
2	Հանքածածկաշերտային աշխատանքներ	ՆՏՆ ...-02-02- **	
3	Հորատապայթեցման աշխատանքներ	...	
4	Հորատանցքեր	...	
5	Ցցային աշխատանքներ: Գրունտների ամրակապում: Իջուցիկ հորեր	...	
6	Սիւնային բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ	...	
7	Հավաքովի բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ	...	
8	Կոնստրուկցիաներ աղյուսից և բլոկներից	...	
9	Մետաղական կոնստրուկցիաներ	...	
10	Փայտե կոնստրուկցիաներ	...	
11	Հատակներ	...	
12	Տանիքներ	...	
13	Շինարարական կոնստրուկցիաների և սարքավորումների պաշտպանություն քայքայումից /կոռոզիայից/	...	
14	Գյուղական շինարարությունում օգտագործվող կոնստրուկցիաներ	...	
15	Հարդարման աշխատանքներ	...	
16	Ներքին խողովակաշարեր	...	
17	Ջրնուղկոյուղի ` ներքին կառուցվածքներ	...	
18	Ջեռուցում ` ներքին կառուցվածքներ	...	
19	Գազամատակարարում ` ներքին կառուցվածքներ	...	
20	Օդափոխություն և օդի լավորակում	...	
21	Շենքերի էլեկտրալուսավորվածություն	...	
22	Ջրնուղ -արտաքին գծեր	...	
23	Կոյուղի -արտաքին գծեր	...	
24	Ջերմամատակարարում և գազատար խողովակաշար ` արտաքին գծեր	...	
25	Մայրուղային և արդյունագործական խողովակաշարեր	...	
26	Ջերմամեկուսիչ աշխատանքներ	...	

27	Ավտոմոբիլային ճանապարհներ	...	
28	Երկաթգծեր	...	
29	Թունեղևներ և մետրոպոլիտեններ	...	
30	Կամուրջներ և խողովակներ	...	
31	Աէրոդրոմներ	...	
32	Տրամվայի ուղիներ	...	
33	Էլեկտրահաղորդակցուղիներ	...	
34	Կապի, ռադիո և հեռահաղորդակցության կառուցվածքներ	...	
35	Լեռնանցումային աշխատանքներ	...	
36	Հիդրոտեխնիկական կառույցների հողային կոնստրուկցիաներ	...	
37	Հիդրոտեխնիկական կառույցների բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ	...	
38	Հիդրոտեխնիկական կառույցների քարե կոնստրուկցիաներ	...	
39	Հիդրոտեխնիկական կառույցների մետաղական կոնստրուկցիաներ	...	
40	Հիդրոտեխնիկական կառուցվածքների փայտե կոնստրուկցիաներ	...	
41	Հիդրոմեկուսիչ աշխատանքներ հիդրոտեխնիկական կառուցվածքներում	...	
42	Ափի ամրակապման աշխատանքներ	...	
43	<b>Նավարանների և սահահարթակների նավատար ուղիներ</b>	...	
44	Ստորջրյա շինարարական (ջրասուզման) աշխատանքներ	...	
45	Արդյունաբերական վառարաններ և խողովակներ	...	
46	Շենքերի և շինությունների վերակառուցման աշխատանքներ	...	
48	Կանաչապատում, պաշտպանիչ անտառատնկիներ, բազմամյա պտղատու տնկիներ	...	
49	Նավթի և գազի հորատանցքեր	...	
50	Նավթի և գազի հորատանցքեր ծովափնյա պայմաններում	...	

**2. Մոնոստային աշխատանքներ (ծածկագիր 02)**

1	Սետադամշակման սարքավորումներ	ՆՏՆ ...-02-01- **	
2	Փայտամշակման սարքավորումներ	ՆՏՆ ...-02-02- ...	
3	Վերհան տրանսպորտային միջոցների սարքավորումներ	...	
4	Ջարդիչ-աղացող, հարստացման և ազլոմերացիոն աշխատանքների համար անհրաժեշտ սարքավորումներ	...	
5	Կշռիչ սարքավորումներ	...	
6	Ջերմաուժային սարքավորումներ	...	
7	Կոմպրեսորային մեքենաներ, ճնշիչներ և օդափոխիչներ	...	
8	Էլեկտրատեխնիկական սարքավորումներ	...	
9	Էլեկտրական վառարաններ	...	
10	Կապի սարքավորումներ	...	

11	Հաշվիչ տեխնիկայի , ավտոմատացման միջոցներ և սարքեր	...	
12	Տեխնոլոգիական խողովակաշարեր	...	
13	Ատոմային էլեկտրակայանների սարքավորումներ	...	
14	Գլոցվածքային /ի ծի թածի ի ձ/ արտադրության սարքավորումներ	...	
15	Գազի մաքրման սարքավորումներ	...	
16	Սև մետաղների արտադրության սարքավորումներ	...	
17	Գունավոր մետաղների արտադրության սարքավորումներ	...	
18	Նավթամշակման արտադրության և քիմիական ձեռնարկությունների սարքավորումներ	...	
19	Ածուխի և տորֆի արտադրության սարքավորումներ	...	
20	Ե/ գծի ազդանշանային, , կենտրոնացման և բլոկավորման սարքավորումներ	...	
21	Մետրոպոլիտենի և թունելների սարքավորումներ	...	
22	Հիդրոէլեկտրակայանների և հիդրոտեխնիկական կառույցների սարքավորումներ	...	
23	Էլեկտրատեխնիկական արդյունաբերության սարքավորումներ	...	
24	Շինանյութերի արդյունաբերության սարքավորումներ	...	
25	Թղթի և ցելյուլոզի /թաղանթանյութի/ արտադրության սարքավորումներ	...	
26	Տեքստիլ /մանածագործվածքի/ արդյունաբերության սարքավորումներ	...	
27	Պոլիգրաֆիական արդյունաբերության սարքավորումներ	...	
28	Սննդի արդյունաբերության սարքավորումներ	...	
29	Թատերական կազմակերպությունների սարքավորումներ	...	
30	Հացահատիկի վերամշակման և պահպանման համար նախատեսված սարքավորումներ	...	
31	Կինեմատոգրաֆիայի կազմակերպությունների սարքավորումներ	...	
32	Կապի միջոցների /այդ թվում էլեկտրոնային/ կազմակերպությունների սարքավորումներ	...	
33	Թեթև արդյունաբերության սարքավորումներ	...	
34	Առողջապահական կազմակերպությունների և բժշկական արդյունաբերության սարքավորումներ	...	
35	Գյուղատնտեսական արտադրության սարքավորումներ	...	
36	Կոմունալ տնտեսության և կենցաղային ծառայության կազմակերպությունների սարքավորումներ	...	
37	Ընդհանուր նշանակության սարքավորումներ	...	
38	Տեխնոլոգիական մետաղական կոնստրուկցիաներ, ռեզերվուարներ /պահեստարաններ/ և գազամբարներ	...	
39	Եռակցման միացումների հսկողություն	...	



3. Թողարկման - կարգաբերման աշխատանքներ			
1	Էլեկտրատեխնիկական սարքավորումներ	ՆՏՆ ...-02-17- ...	
2	Կառավարման ավտոմատացված համակարգեր	...	
3	Օդափոխության և օդի լավորակման համակարգեր	...	
4	Վերհան տրանսպորտային միջոցների /ամբարձիչների/ սարքավորումներ	...	
5	Սետադամշակման սարքավորումներ /դարբնոցամամլիչային սարքավորումներ/	...	
6	Սառնարանային և կոմպրեսորային կայանքներ	...	
7	<b>Ջերմաէներգետիկական սարքավորումներ</b>	...	
8	Փայտամշակման սարքավորումներ	...	
9	Ջրամատակարարման և և կոյուղու շինություններ	...	
*	ՆՏՆ-ի ծածկագրերը ընդունվում են <b>81-01-94</b> համաձայն		
**	Գործարկման տարին		

**ՆՏՆ չափորոշիչների աղյուսակ**

Անվանումը \_\_\_\_\_

Աշխատանքի կազմը \_\_\_\_\_

Աղյուսակ \_\_\_\_\_  
 (ծածկագիր)

Չափորոշիչների \_\_\_\_\_  
 (չափիչ)

h/h N	Աշխատ. ծածկագիրը	Ծախսերի տարրերի անվանումը	Չափման միավոր	Չափորոշիչների ցուցանիշներ կամ աշխատանքների տեսակների ամբողջական անվանում		
				1	2	...,n
1	2	3	4	5	6	...,m
1		Բանվորների աշխատատարություն Աշխատանքի միջին կարգը	մարդ/ժամ			
2		Մեքենավարի աշխատատարությունը	մարդ/ժամ			
3		Մեքենաներ: հիմնական (անվանումը) այլ	մեք./ժամ %-ով հիմնական շին. մեքենաների ծախսերի արժեքից			
4		Նյութեր, սարքեր և կոնստրուկցիաներ հիմնական (անվանումը) այլ	%-ով հիմնական նյութերի, սարքերի արժեքից			

**ՆՏՆ-ի մշակման ընթացքում կիրառվող չափման միավորներ**

կգ; 10կգ; 100կգ
տ; 10տ; 100տ
մ; 10մ; 100մ; 1000մ; գծմ;
կմ; 10կմ; 100կմ
մ <sup>3</sup>
կվտ/ժամ
100 հատ քար
սարք; կցվածք; 100թերթ
և այլն

**Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր**  
Բանվորների աշխատատարության կամ աշխատանքի ծախսերի

h/h N	Մասնագիտությունների ծածկագիրը	Դասակարգումների և մասնագիտությունների անվանումը	Քանակը մարդ/ժամ
1	2	3	4
		Մեքենավար	
		Տանիքագործ	
		Կռունկավար	
		...	
		...	

Կազմեց՝

Ստուգեց՝

Ձև-N-1

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ  
 Գ Ն Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Ն Կ Ի Ց**

Հափորոշիչ \_\_\_\_\_

(Հափիչ)

h/h	Տեխնոլոգիական հաջորդականություն կամ գործողություններ	Չափման միավոր	Աշխատանքների ծավալների հաշվարկ	
			Հաշվարկ՝ բանաձևի կիրառմամբ	Աշխատանքների ծավալներ
1	2	3	4	5

Կազմեց՝

Ստուգեց՝

Ձև-N-2

**Գ Ն Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ն**  
 (կոնստրուկտիվ տարրի կամ աշխատանքների տեսակների անվանումը)

Հափորոշիչ \_\_\_\_\_

(Հափիչ)

h/h N	Հիմնավորում	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավոր	Տեխնոլոգիական պրոցեսների ծավալը	Ռ-նստությունների պահանջարկ	
					Միավորի արժեքը	Ընդամենը՝ սյուն5 x սյուն6
1	2	3	4	5	6	7

Կազմեց՝

Ստուգեց՝

**Արտադրական հարմարանքների և սարքավորումների ծախսերի կառուցվածքը, որոնք  
չեն ներառվում ՆՏՆ գնահատվելու**

**1. Վերադիր ծախսերի կառուցվածքում հաշվառվող ծախսեր**

- 1) հիմնական միջոց չհանդիսացող և կապալային աշխատանքներում օգտագործվող փոքրարժեք և արագամաշ գործիքների և արտադրական գույքի մաշվածքն ու նորոգման ծախսերը
- 2) ժամանակավոր շինությունների, հարմարանքների և սարքերի /կառուցվածքների/ մաշվածքն ու նորոգման ծախսերը
- ա. աշխղնկների և վարպետների /կառուցվող օբյեկտին կից/ գրասենյակներ և պահեստներ
- բ. կառուցվող օբյեկտին կից պահեստավորման տարածքներ և շվաքարաններ
- գ. ցնցուղարաններ, չկոյուղացված զուգարաններ և բանվորների համար ջեռուցվող տարածքներ
- դ. փռոցներ /настилы/, ձեռնասանդուղքներ, աստիճաններ, անցումային կամրջակներ, երթային /ходовые/ տախտակներ, շենքերի նշահարման ընթացքում շրջանշումներ /обноски/
- ե. անվտանգության տեխնիկայի շինություններ, հարմարանքներ և սարքեր /կառուցվածքներ/
- զ. փայտամածեր և լաստակներ /подмости/, որոնք նախատեսված չեն նախահաշվային նորմերով, արտաքին կախալաստակներ /подвесные люльки/, ցանկապատեր, պաշտպանիչ հովարներ, հորատապայթեցման աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ծածկեր
- է. էլեկտրաէներգիայի, ջրի, գոլորշու, գազի և օդի մայրուղային և բաշխիչ ցանցերի ժամանակավոր չափաատում /разводка/ աշխատանքների իրականացման համար նախատեսված սահմանագծի շրջանակներում /կառույցի պարագծից կամ էլ գծային շինության առանցքից մինչև 25մ հեռավորությամբ /
- 3) շինհրապարակում գոյություն ունեցող և կառուցվող շենքերի և շինությունների հարմարեցման ծախսեր՝ շինարարության ընթացքում նախատեսվող վերը նշված ժամանակավոր շինությունների փոխարեն

**2. Արտադրական հարմարանքներ և սարքավորումներ, որոնք հաշվառվում են  
ամորտիզացիոն հատկացումների /մասհանումների/ նորմերով՝ շինարարական  
մեքենաների և մեխանիզմների պահպանության և շահագործման համար  
նախատեսված ծախսերի կազմում**

- 1) եռոտանիներ, եռակցման մետաղալարի մաքրման և փաթաթման սարքավորումներ, խողովակների ձեռքով եռակցման կենտրոնացնող /центрирующей/ սարքավորումներ , ձեռքի հիդրավլիկ պոմպեր և մամլիչներ /пресс/,
- 2) շարժական մետաղական և փայտյա աստիճաններ հարթակներով, մետաղական գործասեղաններ, գույքային իշտոնուկներ, արկղեր /лари/,
- 3) փոք ճոպանասարքեր և մոնտաժման սարքավորումներ, բազմաձախարակներ /тали/, ձեռքի կարապիկներ /лебедки/, ամբարձիկներ /домкраты/, դինամոմետրեր /ուժաչափիչներ/ և այլն,
- 4) թափիչ արկղեր, բունկերներ /զետեղարաններ/ , արկղեր , բետոնի և շաղախների բեռնման կոնքեր /бадьи/, ձեռնասայլակներ /тачки/,
- 5) մետաղալարերի եռակցման ապարատներ, օդաբուքեր /воздуходув/, փչամաքրման և օդաքաշ շարժական օդափոխիչ սարքեր՝ պայթուցավտանգ մածիկների և պոլիմերային նյութերի կիրառմամբ, շինարարական կոնստրուկցիաների էլեկտրական չորուցիչներ /չորանոցներ/,

ացնտիլենային գեներատորներ /բացի սարքավորումների մոնտաժման ընթացքում  
օգտագործվողներից/ ,

- 6) աշխատանքների կազմակերպման վտանգավոր գոտու պարսպապատման  
/ցանկապատման/ համար նախատեսված տեխնիկական միջոցներ՝ ուղեփակոցներ /шлагбаум/,  
ազդանշանային կայմասյուններ /мачта/, ռադիոսարքավորումներ, լուսարձակներ: